««ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 189-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել 3.1-ին և 3.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված առևտրային գործունեության թույլտվությունը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում տրամադրվում է մրցույթի հիման վրա, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ պետական գույքի կառավարման ոլորտի լիազոր մարմինը կամ համայնքի ղեկավարը կնքում է մաքսային հսկողության գոտի հանդիսացող համապատասխան տարածքն ուղղակի եղանակով վարձակալության տրամադրման պայմանագիր։

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը սահմանում է Կոմիտեն։»։

Հոդված 2. Օրենքի 256-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, ինչպես նաև պետական մասնակցությամբ կազմավորված այլ իրավաբանական անձինք» բառերը։

Հոդված 3. Օրենքի 284-րդ հոդվածը լրացնել 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«5. Անմաքս առևտրի խանութների վայրերը սահմանում է Կոմիտեն։

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված վայրերում կարող են գործունեություն իրականացնել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նախաորակավորված անձինք՝ մրցույթի արդյունքում։

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը

սահմանում է Կառավարությունը։»։

Հոդված 4. Օրենքի 285-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3) նախաորակավորված լինելու և սույն օրենքի 284-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով կազմակերպված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու մասին տեղեկություններ։»։

Հոդված 5. Օրենքի 287-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Անմաքս առևտրի խանութի տիրապետողների ռեեստրից անմաքս առևտրի խանութի տիրապետողին հանելու հիմք է հանդիսանում անմաքս առևտրի խանութի տիրապետողի կողմից նախաորակավորման արդյունքում ստանձնած պարտավորությունների չկատարումը։»։

Հոդված 6. Մինչև սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը, անմաքս առևտրի խանութների համար Կոմիտեի կողմից սահմանված վայրերում գործունեություն կարող են իրականացնել մինչև Օրենքի 284-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նախաորակավորման կարգի ընդունումը անմաքս առևտրի խանութի տիրապետողների ռեեստրում ներառված անձինք։